

ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆ

ՀԱՅԵՒԹԻՒՐՔ ՎԱԻԵՐԱԹՂԹԵՐ

1

Հարկ չկայ չեշտելու, թէ ո եւ է դարաշրջան եւ կամ առհասարակ պատմական մի գէպք ուսումնասիրելու համար ի՞նչ մեծ կարեւորութիւն ունի նիւթին վերաբերեալ վաւերաքղթերի ծանօթութիւնը, լինի գրանք դաշնագիրներ, պայմանագրութիւններ, համաձայնաթղթեր թէ նման ուրիշ փաստաթղթեր : Պատմագիտական հետազոտութեանց համար դըրանք հանդիսանում են մի-մի առաջնակարգ աղբիւրներ, որ անտես չէ կարող անել եւ ոչ մի բարեխիղճ ուսումնամիրող : Ընդհակառակը, որոնել պարտաւոր է այդ աղբիւրները, հնարաւորութեան սահմանում :

Եւրոպական գիտութեան համար ըստ ինքեան հասկանալի նախապայման է այդ աշխատանքը, որ, գժբախտաբար, գրեթէ անտես է առնւած մեղնում : Մինչեւ իսկ մեր սեփական, նորագոյն պատմութիւնը ուսումնասիրելու համար հայ հետազոտողը հարկագրուած է յաճախ օտար ժողովածուների եւ դիւանների դիմելու : Հայկական հարցին, հայոց նորագոյն պատմութեան վերաբերեալ փաստաթղթեր ամփոփող հայերէն հատորներ մենք չունենք հրապարակի վրա :

Մեղ հետաքրքրողը, ամենից առաջ, քուն վաւերագիրներն են, անհրաժեշտ ծանօթագրութիւններով : Ինչ վերաբերում է դրանց լուսաբանման եւ օգտագործման, այդ արգէն կախւած է հետազոտողի անձնաւորութիւնից եւ պատմագիտական հայեցողութիւնից, նրա ենթակայական վերաբերմունքից հանդէս ուսումնասիրութեան առարկայի : Մենք կարող ենք եւ պէտք է որ, ի հարկէ, որոշ վերապահութիւն հանդէս բերենք հրատարակիչների կամ հետազոտողների կողմից տրւած մեկնաբանութեան եւ գնահատութեան այս կամ այն վաւերագրին : Եւ սակայն անտես անել կարող չենք բուն իսկ վաւերագիրը եթէ կեղծւած չէ նա : Հետազօտողը ուշի ուշով կարդալու, օգտագործելու է իր նիւթին հայող ամէն մի վաւերագիր, հրապարակւած լինի նա մինչեւ իսկ շահագրգուած մարդոց եւ մար-

մինների կողմից : Այդպիսիք են, օրինակ, ամէն կարգի «կապոյտ», «ղեղին», եւ այլ գոյնի կառավարական հրատարակութիւնները : Զոր ու ցամաք վաւերագիրների ժողովածուներ լինելով հանդերձ՝ դրանք խմբագրւած են որո՛շ միտումով եւ հետապնդում են մի մասնակի նպատակ : Երբ նման ժողովածուներ նոր եւ մանաւանդ նորագոյն ժամանակների գէպէր են չօշափում, մեր վերապահութիւնը, ի հարկէ, պիտի լինի առելի՛ մեծ : Բոլոր պարագաների տակ, հայ հետազոտողը պարտաւոր է դիմել ոչ միայն անմիջապէս, այլ եւ միջնորդապէս Հայաստանին եւ հայ ժողովուրդին վերաբերող վաւերագրային աղբիւրներին : Այդպիսիք են, առաջին հերթին, Թիւրքիային եւ Ռուսաստանին հայող եւ կամ նրանց կառավարութիւնների կողմից հրատարակւած վաւերագիրները :

* *

Այսպէս մօտենալով խնդրին առ հասարակ, մեր ուշադրութիւնը դրաւում են այսօր մի շարք վաւերագրային հրատարակութիւններ, որ վերջին տարիների ընթացքում լոյս է ընծայել Բերլինի համալսարանին կից զործող եւ նրա ինքնավար մի բաժանմունքը հանդիսացող «Արեւելեան Լեզուների Սեմինար»-ի թիւրքաբանութեան երիտասարդ տևուցչապետ Դոկտ. Գ. Եշկէ (G. Yaschke), նոյն հիմնարկութեան տարեկան «Տեղեկագիրներ»-ի վերջին երեք հատորներում (1932-1934 թ.) : Պրոֆէսորը հմուտ է, թիւրքերէնից դատ, նաեւ եւրոպական բոլոր լեզուներին եւ ոռուսերէնին ու կարողացել է օգտել անմիջական աղբիւրներից : Հայաստանին վերաբերեալ վաւերագիրների հարցում նկատելի է հայերէն աղբիւրներից օգտել չկարենալու իր թերթին, որ դիտակցում է եւ հեղինակն ինքը : Անկախ իր անհատական վերաբերմունքից եւ տւած լուսաբանութիւնից, մեզ շահագրգուռ են իր լոյս ընծայած կամ հետազոտած վաւերագիրներն՝ ինքնին, որպէս այդպիսիք :

* *

Արեւելեան Լեզուների Սեմինարի 1932 թ. «Տեղեկագիրներ»-ի մէջ պրոֆ. Եշկէ հրատարակել է այսպէս կոչւած Ալեքսանդրապոլի Դաշնագիրը՝ թիւրքերէն, Փրանսէրէն եւ գերմաներէն լեզուներով ու մի համառօտ տեսութեամբ : Գրւածքի վերնագիրն է՝ «Թիւրքիայի կամաց սահմանը եւ Գիւմրիի (Ալեքսանդրապոլի) հաշտութեան դաշնագիրը» : Die turkisch - armenische Grenze und der Friedensvertrag von Gümru (Alexandropol) .

Ալեքսանդրապոլի դաշնագիրը (2 Դեկտ. 1920 թ.) յայտնի է,

պատմական գէպէրի հետեւանքով վաերացւած չէ՝ ոչ Հայաստանի եւ ոչ էլ թիւրքիոյ պետական գերադոյն մարմինների կողմից : Այդ պատճառով եւ նա երբեք չի դիտել որպէս բուն իսկ դաշնագիր : Դըրանով բացատրելու է թերեւս և այն, որ «Հաշտութեան դաշնագիր» կոչւած այդ վաւերաթուղթը հրատարակութեան չեն տւած հայ եւ թիւրք կառավարութիւնները : Արդէն իսկ, իրականին մէջ չեղեալ նկատւած այդ «Դաշնագիր»ը հետազային փոխարինւել է, յայտնի է, Մոսկայի (1921 թ. Մարտ 16) և Կարսի (1921 թ. Հոկտեմբեր 13) դաշնագիրներով :

Այս այսպէս լինելով հանդերձ, գիտութիւնը այնուամենայնիւ հետամուս է չհաստատւած ու չիրագործւած վաւերաթուղթեր եւս հրապարակ հանելուն : Դրանք նմանապէս մի-մի արձագանգ են պատմական որոշ մոմենտի : Այդպէս պիտի նայել նաև պրոֆ. Եշկէ հրատարակութեան վրա : Վերջինիս աղբիւրները պաշտօնական բնոյթ չեն կրում, այլ՝ մասնաւոր : Գրւածքը («Տեղեկագիրներ» 1932 թ. Բ. մաս, էջ 162-176) բաղկացած է հետեւեալ մասերից . ա.) 1- Ներածութիւն, ուր տրւած են մի շարք լուսաբանութիւններ, ծանօթագրութիւններով հանդերձ : Որչափ եւ հեղինակը աշխատում է ըստ երեւոյթին առարկայական լինել, նկատելի է սակայն, որ նա զերծ չէ միակողմանիութիւնից ու նախասերութիւնից : Այդ արդիւնք է թերեւս առաջին հերթին, ը աղբիւրների միակողմանիութեան : Համաթուրանականութեան նկատումների փաստը «ի հաշիւ Հայաստանի» ընդունելով հանդերձ՝ հետազոտողը մեղ քաջ ծանօթ պատմական դէպէրը սովորական դարձած պարզունակ եղանակով տանում կապում է «Ռուսական իմպերիալիզմին» եւ «Հայկական աղդաշնականութեան», որ հարցի ճշգրիտ լուսաբանութիւնը չ'է, ի հարկէ :

Պրոֆ. Եշկէի հրատարակած բնագրին (Ալեքսանդրապոլի դաշնագրի) հիմք ծառայել են ա.) Հայաստանի կառավարութեան կողմից բանակցութիւններին մասնակցող պտւիրակութեան նախագահ Ա. Խատիսեանի մէկ գրւածքը՝ լոյս տեսած Revue des Études Arm.

IV հատորում (1924 թ.), էջ 43, ուր «փորձ է արւած անաղանօքն վերականգնելու բնագիրը» : Վերջինս հրատարակել է, ծանօթագրում է Եշկէ, եւ Պուազէբար (Poidebard) իր «Le Transcaucase et la République d'Arménie dans les Textes Diplomatiques de Brest — Litovsk au Traité de Kars 1918 — 1921» աշխատութեան մէջ (Revue des Études Armén. III. (1923), էջ 63-78. տես նաև հատ. IV էջ 31-98 վաւերագիրներ :

Բ. Անգորայի կառավարութեան այն ատենւան արտաքին գործոց գործազարի փոխանորդ Ահմէդ Մուխտար Բէյի կողմից Ազգային Մեծ Ժողովի նիստում քաղաքօրէն կարգացւած դաշնապէրի ըլնաղիրը, որ այդ ձեւով էլ մուծւած է նիստի (6 Դեկտ. 1920 թ.) արձանագրութեան մէջ ու լոյս է տեսել «Հաքիմիյէթ Միլիյէ» թերթի թ. 55, 105-ում :

«Այդ երկու բնագիրները, ասում է Եշէկ, Էական կէտերում տարբերում են իրարից: Մինչ, օրինակ, համաձայն Թիւրքական ըմբռնման՝ սահմանը (Հայաստանի եւ Թիւրքիոյ) դրեթէ բոլորովին նոյնանում է Մոսկայի եւ Կարսի դաշնագիրների մէջ առաջ բերածի հետ, անդին՝ Դոկտ. Խատիսեանի տւեալներից հետեւցնել կարելի է, որ Մուստաֆա Քէմալ շարունակել է, անցողակի կերպով, 1918 թ. համաթուրանական քաղաքականութիւնը *): Այդ ընդունում է նաև եւրոպական-ամերիկեան գրականութիւնը, որ բացառապէս հայ աղբեւրների վրա է հիմնուում (օր. Մանդէլտամ «La Société» եւն., էջ 98): Թիւրք բնագրի - ոչ լրիւ, անշուշտ - վաստահելիութեան համար խօսում է այն փաստը, որ նա ծանուցւել է՝ դաշնապիրը կնքելուց անմիջապէս յետոյ»:

Եշէկ շարունակում է, «Թէեւ Գիւմրիի դաշնագիրը ստորագրուած օրն իսկ կանխւած էր Հայաստանի խորհրդայնացումով, բայց եւ այնպէս՝ պատմական տեսակէտից նշանակալից է իրեւ Ազգային Թիւրքիոյ տառաջին դաշնագիրը, միջազգային իրաւունքի գետնի վրա»: Այսուհետեւ հեղինակը առաջ է բերում թարգմանութիւնը Ալբանիականութիւնի դաշնագրի այն յօդւածների (առնելով «Հաքիմիէթ Միլիյէ» թերթի 1920 թ. Դեկտ. 7, թիւ 83-ից), որ Մուխթար-Բէյը կարգացել է Անդորայի Ազգային ժողովում: «Պակսող յօդւածները, ասում է Եշէկ, կարեւորութիւն չեն ներկայացնում եւ վերաբերում են մասնակի բաների»: Ապա, «Հաշտութեան պայմանները» վերնադիրի տակ առաջ է բերում դաշնագիրը, որ պարունակում է

*) Որքան յիշում եմ* Ա. Խատիսեան վերոյիշեալի նման մի փորձ առել էր աւելի վաղ, 1921 թ. Կ. Պոլսի «Ճակատամար» թիւրքի էջերում: Ուր է զտնում այժմ բուն օրինակը դաշնագրի, յայտնի չէ մեզ:

Ծան ուրիշների նման՝ Եշէկ եւս այն միամիտ հաւատն ունի, թէ Մուստաֆա Քէմալ առհասարակ, սկզբունքով, երածարած է ընդմիշտ համարութանական նըլուումներից:

ԾԱՆՈՒԹ. ԽՄԲ.-Ալեքսանդրապոլի դաշնագրի բնագիրը պատւիրակութեան նախագահ Ա. Խատիսեանը 1920 թ. դեկտեմբերին յանձնել է Հայաստանի խորեր-դային կառավարութեան եւ, ուրեմն, զտնում է Երեւանի պետական դիւնելում:

Յ-բղից մինչեւ 15-րդ յօդւածները : Հեղինակն իր կողմից կցում է բազմաթիւ ծանօթագրութիւններ , առաջ բերելով միեւոյն ժամանակ իրեն բոլոր աղբիւրները , անելով նաև յաւելումներ ու բաղդատութիւններ :

Գերմաներէն թարգմանութիւնից յետոյ , արւած թիւրքերէնի վրայից , առաջ է բերւած Ա. Խատիսեանի վերականգնած բնագիրը՝ Փրանսերէն լեզով (Revue des Études Arméniennes IV. (1924), էջ 70-72) , որ բաղկացած է 16 յօդւածից (1-16) : Ստորագրած են , Ալեքսանդրապոլ 2 Դեկտ . 1920 թ . Հայաստանի կողմից՝ Ա. Խատիսեան , Ա. Գիւլիսանդանեան , Ա. Կորգանեան . Թիւրքիոյ կողմից՝ Քեազիմ Կարարէքիր փաշա , Հիւսէյին Բէյ (կրզրումի պատգամաւոր) եւ մի երրորդ անձ , Տրապիզոնի պատգամաւոր , որի անւան տեղ բաղմակէտեր են նշանակւած :

Վերջը հետեւում է թիւրքերէն բնագիրը :

II

Նոյն հեղինակը , պրոֆ . Եշէկ , Արեւել . Լեզ . Սեմինարի «Տեղեկագիր»-ի 1934 թ . հասորում (Մասն Բ . , էջ 133-142) հրատարակել է եւ մի ուրիշ գրութիւն՝ «Վաւերագիրներ Գիւմրիի (Ալեքսանդրապոլի) դաշնագիր մասին» , որ լրացումն եւ ամբողջացումն է իր առաջին՝ վերը յիշաստակւած հրատարակութեան : Այդտեղ նախ եւ առաջ յիշաստակւում է խորհրդային կասավարութեան (Մոսկայի) հրահանգով ու Պրոֆ . Կիլչնիկովի եւ Ա. Սարանինի խմբագրութեամբ հրատարակւած (ոռուսերէն լեզով) «Նորագոյն ժամանակների միջազգային քաղաքականութիւնը» անունով վաւերագիրների ժողովածուի *) թիւ 842 թ . ը (Մասն Գ . պլակ 2 , (1929) , 26 էջ 71-73) , որ է՝ «Հաշտութեան դաշնագիր Հայաստանի Դաշնակցական կառավարութեան եւ Թիւրքիոյ միջեւ , կնքւած 1920 թ . դեկտ . 2-ին Ալեքսանդրապոլ - Գիւմրիում» :

Հստ երեւոյթին , ասում է Եշէկ , մենք այստեղ գործ ունինք ոռուսերէն մի թարգմանութեան հետ — ոչ բոյրովին լրիւ եւ ոչ անսիսլ — , որ կատարել է Կարմիր Բանակի երեւան մտնելուց յետոյ՝ այնտեղ գտնւած բնագրի վրայից **) : Այդ բնագիրը մեծապէս հա-

*) Այդ հրատարակութեան կանդրադաշտ մենք առանձին յօդւածով :

**) Մի տեղ — չեմ յիշում ուր — կարդացած պիտի լինեմ , որ հայ բռչեւիկերը հրատարակած են հայերէնը :

մաճայն է 1920 թ. դեկտ. 6-ին Անգուրայում ծանուցւած թիւրք խըմ-ըսպրութեան: Նա հնարաւորութիւն է տալիս միւնոյն ժամանակ՝ լրացնելու վերջինիս (թիւրքերէն բնագրի) պակասները եւ վերը-տուզման ենթարկելու հայ լիազօր բանագնաց Դոկտ. Ա. Խատիսեա-նի^{*)} վերականգնած բնագիրը»:

*Տարունակութեան մէջ մատնանշւած են (ոռուերէն թարգմա-նութիւնից) Ալ-Պոլի դաշնագրի այն կէտերը միայն, որ զգալիօրէն տարբերում են թիւրքերէն բնագրից: Թիւրքիոյ լիազօր բանագնաց-ներ յիշւած են այդտեղ՝ Քեազիմ Կարարէքիր փաշա, Համիդ-Բէյ և Սուլէյման Նեջաղի-Բէյ^{**)}: Այնուհետեւ առաջ են բերւած տարբե-րութիւնները՝ 1, 2, 15 կէտերի տակ, եշէի գիտողութիւններով մէկտեղ:*

Գրւածքի շարունակութեան մէջ առաջ են բերւած Մ. Քէմալի կասավարութեան կողմից 1920-21 թ. Անգուրայում («Հաքիմ. Միւ-լիյէ») և Փարլիզում («Echo de l'Islam») հրատարակութեան տըր-ւած դիւնագիտական մի շարք թղթեր, «որոնք որոշ լոյս են սփռում Գիւմրիի հաշոտութեան նախալաւանութեան վրա»:

*Այդ վաւերագիրներն են՝ Ա. «Թիւրքիոյ նոտանիերը Ռուսաստա-նին»: 1.՝ Ազգային Մեծ Ժողովի նախագահի 20 յունիս 1920 թ. պա-տասխան-գրութիւնը^{***}) Ռուս. Սոց. Դաշն. Խորհ. Հանրապետու-թեան Արտաքին գործոց Ժող. Կոմիսարի (3 յունիս 1920 թ. թւա-կիր) նամակին^{****}): Ստորագրած՝ Մ. Քէմալ: 2.՝ Թիւրքիոյ (Ան-գորայի) նոտան Ռուսաստանին, 1920 թ. (օ) նոյեմբերի: Քաղւածք:*

Բ. Թիւրքական յուշագիր, 26 սեպտ. 1920 թ.: Քաղւածք: Ստո-րագրած՝ Արտ. Գործ. Կոմիսար Ա. Համիդ Մուլիթար (Echo de l'Is-lam), գ. Թիւրք - Հայկական նոտանիերի փոխանակումն:

1.՝ Թիւրքական նոտան 1 (2 ?) նոյ. 1920 թ.: Քաղւածք: («Echo de l'Islam») թ. 19: Թուրքերէն՝ «Հաքիմ. Միւլ.» թ. 74): Ստոր-

**) Եշիկ ծանօթագրում է, «Այդ բնագիրը այժմ տպւած է նաև Amedeo Gianini-ի «Documenti per la storia della Pace Orientale» (1915-1932), համարում 1933, էջ 17:*

***) Երկրորդ ամեան համար Եշիկ ծանօթագրում է. «Հաւաօրէն» նորի-զադէ Համդի, Տրավիզնի պատգամաւոր», իսկ երրորդ ամեան համար՝ «Սիւլէյման Նեջաղի, Էրզրումի պատգամաւոր»:*

****) «Հաքիմ. Միւլիյէ», 8 յունիս 1920 թ.: Արտատպւած «Ճումհուրիէք»ում, 11 յունիս 1924:*

*****) Revue du Monde Musulman, ԼՊ, (1922), էջ 195. ըստ Կիւչմիկովի (թ. 622) բաւգրւած 2 յունիս եւ պատասխանած 22 նոյեմբերի:*



դրած՝ Ա. Մուխթար: Եշէկ ծանօթագրում է. Թիւրքիոյ առաջին ուլտիմատումը Հայաստանին՝ 7 նոյ. 1920 թ. (Մ. Քէմալ՝ «Նութուք», էջ 304, Գերմ. հրատարակ. Բ. հատոր, էջ 47):

2. Հայկական նոտա, 3 նոյ. 1920 թ.: Քաղւածք: «Ec. de l'Islam», թ. 21: Թիւրքերէնը՝ «Հաքիմ. Միլ.» (թ. 74):

Ստորագրած՝ Հայաստանի Արտ. Գործ. Նախարար Ահմ Զանեան (Դոկտ. Հ. Օհանջանեան): Քաղւածք: («Echo de l'Islam», թ. 21: Թիւրքերէն՝ «Հաքիմ. Միլ.» թ. 74: Թիւրքերէն բնագրում ըստորագրութիւնը՝ Ահանջանեան):

3. Թիւրքական նոտա 8 նոյ. 1920 թ.: Քաղւածք: (Է. de l'Isl.) թ. 20: Թիւրքերէնը՝ «Հաքիմ. Միլ.» (թ. 74): Ստորագրած՝ Ահմէդ Մուխթար:

4. Հայկական նոտա 9 նոյ. 1920 թ.: Քաղւածք: (Ec. de l'Isl.) թ. 21: Ստորագրած՝ Ա. Դիանեան (Օհանջանեան):

5. Հայկական նոտա 10 նոյ. 1920 թ.: Քաղւածք: («Հաքիմ. Միլ.» թ. 76): Ստորագր. Օհանջանեան: Ծանօթագրութեան մէջ Եշէկ նկատում է. «Թիւրքերի ներկայացրած զինադադարի պայմանների (8 նոյ.) մասին համեմատել «Revue du Monde Musulm.» LII էջ 198: 18 նոյ. զինադադարի մասին» A. Giannini: «L'Ultima fase della questione orientale» (1913 - 1932), Հոսմ 1933, էջ 204:

6. Հայկական նամակ Քեաղիմ Կարարեփեր վաշային, 13 նոյ. թւակիր: («Հաքիմ. Միլ.», թ. 77): Ստորագրած՝ Արտ. Գործ. Նախարար Օհանջանեան: Զօրավար Արեգել:

7. Թիւրքական նոտա 13 նոյ. 1920 թ. («Հաքիմ. Միլ.», թ. 77): Ստորագրած՝ Ահմէդ Մուխթար:

*
**

Իր գրւածքի վերջում Պլոֆ. Եշէկ աւելացնում է. «Խորհրդային Ռուսաստանը, որ Հոկտ. 17-ին Հայաստանին եւ նոյ. 11-ին վերջին անգամ Թիւրքիային իր միջնորդութիւնն էր առաջարկել, բայց առանց արդինքի, Գիւմրիի հաշտութեան բանակցութիւնները սկսելուց յետոյ՝ դորձի դիմեց: Նոյն այն օրը (29 նոյ.), երր ժընէվում ՎՅ Ենթայանձնաժողովը առաջարկ մտցրեց՝ Հայաստանը Ազգեայի Դաշնակցութեան մէջ ընդունելու, նոյն այդ օրը Յեղափոխական Կոմիտէն (Կասեան) Հայաստանը խորհրդային հանրապետութիւն հռչակեց (Կիբէչնիկով, թ. 644): Երեւանի կառավարութիւնը, ասկայն, որ 25 նոյեմբերի Վրացիանը, իսկ 2 դեկտ. զօրավար Դրօն էր ստանձնել, Գիւմրիի հաշտութիւնը կնքելուց մի քա-

նի ժամ առաջ Հայստանի հետազայ ճակատագիրը Խորհրդային Ռուսաստանի ձեռքը յանձնեց (1920 թ. դեկտ. 2-ի դաշնագիր : Տես՝ «Yahrbuch des Vol Kerechts», հատոր XVII էջ 32) : Իսկ Ռուսաստանը, յանուն իր բարեկամութեան շահի Թիւրքիոյ հետ, հրաժարւեց այդ Հաշուրթեան՝ Հայստանի համար նպաստաւոր գրեթէ բոլոր որոշումներից» : Մանօթագրութեան մէջ առած է . «Նախագահ Վիլսոնի՝ որպէս իրաւարարի տած որոշումը (22 նոյ. 1920 թ.) տըս- ած է այժմ «Bulletin de l'Institut Juridique International, XXXI (1934), էջ 329-336» :

Այստ, մի քանի խօսքով, Եշէի հրաժարակութեան դիմաւոր կէտերը, Ալեքսանդրապոլի դաշնագրի այլ եւ այլ խմբագրութեանց մասին : Վերջիններս, այսպիսով, ի մի են հաւաքւած այժմ առաջին անգամ, գերման հետազոտողի կողմից եւ օժուած են բաղմաթիւ ծանօթագրութիւններով : Հեղինակը օգտագործել է եւրոպական, ուռւական եւ թիւրքական ամբողջ գրականութիւնը, տալով բոլորի մանրամասն ցանկը : Հետազայ հետազոտողները անդայման նկատի ունենալու են Եշէի կատարած աշխատանքը :

III

Արեւելեան Սիմինարի «Տեղեկագիրներ»ի 1934 թ. հատորի Բ. մասում (էջ 97-132) տպագրւած է Գ. Եշէի մի ուրիշ, աւելի ընդգրածակ գրւածքը՝ «Թիւրքիոյ պետական դաշնագիրները, համաշխարհյան պատերազմից սկսած» վերնագրով : Մինչ հեղինակի վերոյիշեալ երկու հրաժարակութեանց մէջ առաջ են բերւած բուն իսկ վաւերաբուլը - բնագիր կամ թարգմանութիւն -, անհրաժեշտ ծանօթութիւններով եւ աղբիւրների մանրամասն յիշատակութեամբ, այս վերջին հրաժարակութիւնը ներկայացնում է պարզ ցանկը բոլոր այն պետական դաշնագիրների, որ կնքել է Թիւրքիան դանական երկիրների հետ, համաշխարհյան պատերազմից սկսած :

Դժւար էլ էր «Տարեգիրք»ի մէջ ներկայացնել այնպիսի մի աշխատանք, ուր առաջ բերւած լինէին բոլոր դաշնագիրները : Հատորներ պէտք էին դրա համար : Իր այս ձեւի տակ եւս սակայն, Եշէի աշխատանքը խիստ գնահատելի է, քանի որ մանրամասն թւագրութեամբ եւ ժամանակագրական կարդով առաջ է բերում ոչ միայն դաշնագիրների վերնագիրները եւ համառօտ բովանդակութիւնը, այլ եւ մէկ մէկ յիշատակում է այն բոլոր աղբիւրները, ուր լոյս են տեսած դաշնագիրները : Մասամբ գրանցից առնելով էլ հե-

ղինակը կազմել է իր այս աշխատանքը, օգտւելով պաշտօնական աղբիւրներից եւս: Եթէ չեմ սխալում, այս գործն եւս իր տեսակում առաջինն է առհասարակ գրականութեան մէջ: Թիւրք Հանրապետութեան կնքած դաշնագիրների մասին մի ուրիշ համառօտ տեսութիւն լոյս է տեսած 1933-ին՝ Բերլինի «Հանդէս Քաղաքագիտութեան» (Zeitschrift fur Politik) պարբերականի մէջ (էջ 281 շար.):

Եշկէի այս գործը բաժանւած է երկու դլխաւոր մասի. Առաջին՝ Օսմանեան Կայսրութեան կնքած դաշնագիրներ: Երկրորդ՝ Ազգային Մեծ Ժողովի եւ Թիւրք Հանրապետութեան կնքած դաշնագիրներ:

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ կնքած դաշնագիրները գրաւում են փոքր տեղ միայն եւ ընդգրկում են թւով ընդամենը յիսուն դաշնագիրների վերնագիրներ (միշտ էլ՝ աղբիւրների լրիւ եւ ամբողջական յիշտատակութեամբ, թիւրք թէ եւրոպական): Յանկի մէջ առաջին տեղը գրաւում է 1914 թ. յուլ. 31-ին Բուլգարիոյ հետ կնքած առեւտրական – նաւային մի դաշնագիրը:

Բրեստ-Լիտովսկի դաշնագիրները թւագրւած են 22-րդ (5 դեկ. 1917 թ.) եւ 24-րդ (15 դեկտ. 1917 թ.) կէտերի տակ, իսկ Սեւ Ծովի վրա զինագաղաք հաստատելու դաշնագիրը՝ 25-րդ կէտի տակ: Այսուհետեւ մեզ հետաքրքրում են մասնաւորապէս՝ 1917 թ. դեկտ. 18-ին Երգնիայում ստորագրւած (Անդրկովկասեան սրբութեան հետ) զինագաղաքի դաշնագիրը, (2-րդ կէտ), դարձեալ՝ 1918 թ. մարտ 3-ի Բրեստ-Լիտովսկի հաշտութեան դաշնագիրը (30-րդ կէտ) եւ նրա յաւելւածը (31-րդ կէտ), այլ եւ 1918 թ. մայիս 15-ին Բարումում կնքած դաշնագիրը (Անդրկովկասի հետ), պատերազմական գերիների փոխանակութեան մասին (37-րդ կէտ) եւ յատկապէս 1918 թ. յունիս 4-ի Բարումի դաշնագիրը, (38-րդ կէտ), կից պայմանագիրներով մէկտեղ. ա) Վրաստանի (ստորագրւած նաեւ Ադրբեյջանի կողմից), բ) Հայաստանի, ո) Աղրբէջանի հետ կնքած դաշնագիրներ: Դարձեալ մասնաւոր կարեւորութիւն ունի 10 Օգոստոս 1920 թ. Սեւրում ստորագրւած դաշնագիրը (44-րդ կէտ), որ ստորագրած են՝ Բրիտանիական կայսրութիւն, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Հայաստան, Բելգիա, Յունաստան, Պորտուգալիա, Ռումանիա, Գերմուումարիա:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ եւ ԹԻՒՐՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ստորագրած դաշնագիրները ունին երեք ստորաբաժանումներ. Ա. «ԵՐԿԿՈՂՄ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐ»: Թւագրւած՝ ըստ երկիրների (այրբենօրէն), որոնց հետ նոր Թիւրքիան կնքել է դաշնագիրներ – Աֆղանիստան, Եղիպատոս, Ալբանիա, Արդենտինա, Հայաստան, Աղրբէջան, Վրաստան, Ռուսաստան եւ այլն եւ այլն:

Հանրապետական Հայաստանի հետ կնքւած դաշնագիրներն են.

- 1) Նոյ. 7, 1920թ. Գիւմրիի (Ալեքսանդրապոլի) գինագաղար.
- 2) Նոյ 18, 1920թ. Գիւմրիի (Ալ-Պոլի) գինագաղար.
- 3) Դեկտ. 2, 1920թ. Գիւմրիի (Ալեքսանդրապոլի) հաշտութեան դաշնագիրը (միշտ էլ ցոյց են տրւած բոլոր աղբիւրները):

Խորիրդային Հայաստանի հետ կնքւած.

- 1) Հոկտ. 18, 1921թ., Կարսի դաշնագիր.
- 2) Յուլիս 9, 1922թ. Թիֆլիսում ստորագրւած հիւպատոսական դաշնագիր եւ երկաթուղային համաձայնութիւն: Դրանք ստորագրւած են նաև Խ. Ադրբեյջանի կողմից:

Խորիրդային Վրաստան ստորագրել է Թիւրքիոյ հետ.

- 1) 1921թ. հոկտ. 13-ի Կարսի դաշնագիրը:
- 2) 1922թ. մարտ 20-ի Թիֆլիսի «Սահմանային համաձայնագիր»:
- 3) 1922թ. մարտ 20-ի «Քոչի համաձայնագիրը» (Թիֆլիս):
- 4) 1922թ. յուլ. 9-ի հիւպատոսական դաշնագիրը եւ երկաթուղային համաձայնագիրը (Թիֆլիս):

Խորիրդային Ռուսաստանի հետ Թիւրքիան ստորագրել է.

- 1) 1921թ. մարտ 21-ի Մոսկվայի «բարեկամութեան եւ եղայրութեան դաշնագիրը» (մանրամասն աղբիւրներ):
- 2) 1921թ. մարտ 28-ի Մոսկվայի համաձայնագիրը՝ պատերազմական գերիների փոխանակման մասին:
- 3) 1921թ. հոկտ. 13-ի Կարսի դաշնագիրը:
- 4) 1922թ. յուլ. 9-ի հիւպատոսական դաշնագիրը եւ երկաթուղային համաձայնագիրը (Թիֆլիս):

Խորիրդային Միութեան հետ Թիւրքիան ստորագրել է ամենից շատ դաշնագիրներ եւ համաձայնաթուղթեր, թւով 23:

- 1) 1923թ. Օգոստ. 14 Հոռոմ, «Նեղուցների համաձայնագիր»:
- 2) 1924թ. փետր. 7, Անդրուայում, «Հիւպատոսական ժամանակաւոր համաձայնագիր»:

- 3) 1925թ. գեկտ. 17, Փարիզ, «Զէդրութեան դաշնագիր»:
- 4) 1926թ. փետր. 25, Անդրուա, «Առեւտրական ժամանակաւոր համաձայնագիր»:
- 5) 1926թ. մայիս 31, Մոսկվա - «Յաւելւած - արձանագրութիւն», 1-ին կէտի մասին:
- 6) 1926թ. յունիս 29, Ստամբուլ, «Յաւելւած - արձանագրութիւն», 3-րդ կէտի մասին:
- 7) 1926թ. սեպտ. 9, Թիֆլիս, «Արձանագրութեան վերջ», սահմանուշման մասին:

- 8) 1927 թ. յունվար 8, Կարս, «Համաձայնագիր, սահմանային ջուրերի մասին»:
- 9) 1927 թ. մարտ 11, Անգորա, «Առեւտրական և նաւարկութեան դաշնագիր»:
- 10) 1928 թ. մայիս 17, Անգորա, «Երկարաձգման արձանագրութիւն» Խորհրդային Վրաստանի (կէտ 3.) մասին:
- 11) 1928 թ. օգոստ. 6, Անգորա, «Քոչի իրաւունքի մասին համաձայնագիր»:
- 12) 1928 թ. Օգոստ. 6, Անգորա, «Համաձայնագիր սահմանային երթեւեկութեան մասին»:
- 13) 1928 թ. Օգոստ. 6, Անգորա, «Համաձայնագիր սահմանամերձ փոքրիկ գիպւածների մասին»:
- 14) 1928 թ. օգոստ. 6, Անգորա, «Համաձայնագիր անասունների ժանտախտի մասին, Խորհ. Վրաստանի և Թիւրքիոյ պաշտպանութեան համար (նախապէս ստորագրւած՝ 28 յունվար 1927, Բաթում)»:
- 15) 1928 թ. դեկտ. 23, Անգորա, «Յաւելւած արձանագրութիւն» 1928 թ. յուլ. 9-ին Թիւրքիստան կնքած դաշնագրի շուրջը (Խորհրդ. Ռուս.-ի, Խորհրդ. Հայաստանի, Խ. Վրաստանի և Խ. Ազրբէջանի հետ):
- 16) 1929 թ. դեկտ. 17, Անկարա, «Երկարաձգման արձանագրութիւն» (Կարախան) 3-րդ կէտի մասին:
- 17) 1930 թ. հոկտ. 19 Անկարա, «Առեւտրական ժամանակաւոր համաձայնագիր»:
- 18) 1930 թ. նոյ. 25 – դեկտ. 25, Անկարա, «Համաձայնութիւն պատերազմական նաւերի այցելութեան մասին»:
- 19) 1931 թ. մարտ 7, Անկարա, «Արձանագրութիւն ծովային ըստ պառաղինման մասին»:
- 20) 1931 թ. մարտ 16, Մոսկվա, «Առեւտրական և նաւարկութեան դաշնագիր»:
- 21) 1931 թ. հոկտ. 30, Անկարա, «Երկարաձգման արձանագրութիւն» (Լիտվինով), 3-րդ, 16-րդ և 19-րդ կէտերի մասին:
- 22) 1933 թ. սեպտ. 30, Անկարա, «Ապրանքների փոխանակութեան և հաշւակցութեան համաձայնագիր»:
- 23) 1934 թ. յունվար 21, Անկարա, «Վարկային համաձայնագիր»:
- Կցենք նաև երկու ուրիշ վաւերաթղթեր, որ ստորագրւած են Թիւրքիոյ և Խորհ. Ուկրայնայի միջեւ:
- 1) 1921 թ. սեպտ. 17, Մոսկվա, «Համաձայնութիւն՝ պատերազմական և քաղաքացիական գերիների հայրենիք վերադարձնելու մասին»:

2) 1922թ. յունւար 2, Անդորրա, «Բարեկամական դաշնագիր»:

Աւելորդ չէ թերեւս այստեղ թւել եւ այն դաշնագիրները, որ նոր թիւրքիան կնքել է իր եւ մեր մի ուրիշ հարեւանի՝ Պարսկաստանի հետ: Հետազօտութեանց համար այդ դաշնագիրների ծանօթութեան կարեւորութիւնն եւս ակներեւ է:

1) 1926թ. ապրիլ 22, Թէհրան, «Բարեկամութեան եւ ապահովութեան դաշնագիր»:

2) 1926թ. մայիս (^(*)), Անդորրա, «Առեւտրական ժամ. համաձայնագիր»:

3) 1928թ. յունիս 15, Թէհրան, «Լրացուցիչ արձանագրութիւն»:

1-ին կէտի շուրջը:

4) 1929թ. ապրիլ 9, Անդորրա, «Համաձայնութիւն սահմանների ապահովութեան համար»:

5) 1932թ. յունւար 23, Թէհրան, «Համաձայնագիր սահմանների ճշտման մասին»:

6) 1932թ. յունւար 23, Թէհրան, «Իրաւաբարութեան եւ իրաւախոհութեան դաշնագիր»:

7) 1932թ. նոյեմբ. 5, Անկարա, «Բարեկամութեան դաշնագիր»:

8) 1932թ. նոյեմբ. 5, Անկարա, «Դաշնագիր ապահովութեան եւ տնտեսական գործակցութեան մասին»:

Թւենք նաեւ Աֆղանիստանի հետ թիւրքիոյ սոորագրած դաշնագիրները.

1) 1921թ. մարտ 1, Մոսկվա, «Եղբայրութեան դաշնագիր»:

2) 1922թ. հոկտ. 4, Քարուլ, «Լուսաբանման համաձայնագիր», 1-ին կէտի մասին:

3) 1928թ. մայիս 25, Անկարա, «Դաշնագիր՝ Եղբայրութեան եւ գործակցութեան շուրջը»:

4) 1931թ. սեպտ. (^(*)), Անկարա, «Համաձայնութիւն առաջնադոյն նպաստառորման մասին՝ բնակութիւն հաստատելու համար»:

Բ. ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐԸ թւով շատ չեն, ընդամենը 19: Մեղ հետաքրքրում են դրանցից առաջին երեքը.

1) 1921թ. հոկտ. 13, Կարսի դաշնագիրը (Թիւրքիա, Հայաստան, Աղրբէջան եւ Վրաստան, գործակցութեամբ Խորհ. Ռուսիոյ):

2) 1922թ. յուլ. 9, Թիֆլիսի «Հիւլատոսական դաշնագիրը եւ ընտանիկան ու անհատական իրաւունքի համաձայնագիրը», նոյն պետութեանց միջեւ կնքւած:

3) 1928թ. յուլ. 9-ի Թիֆլիսի «Համաձայնագիրը՝ երկաթուղիների փոստի եւ հեռագրի մասին»:

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐԸ թւով 42 են։ Դրանք բխում են կողանի դաշնագրի (6 օդոստ. 1924 թ. ոյժի մէջ մտած, Թիւրքիոյ համար) այս կամ այն յօդւածի տրամադրութիւնիցը եւ կրում են լրացուցիչ բնոյթ։ Մեղ համար դրանք չեն ներկայացնում մասնակի շահեկանութիւն։

**

Ահա բոլոր այն վաւերաթուղթերը, որ պատերազմի սկզբից եւ մասնաւորապէս յետպատերազմեան ըլջանում կնքել է Թիւրքիան այս կամ այն պետութեան հետ, եւ որոնք մասնակի շահեկանութիւն են ներկայացնում մեղ համար։ Հայոց նորագոյն պատմութեան ուսումնասիրութեան համար դրանցից շատերը կարեւոր աղբիւրներ են։

ԲԵՐԼԻՆ

